ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«20» դեկտեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն Ա/Ն-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝ Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյան, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Աղանյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՀԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը ներկայացել է 3-րդ հարցի քննարկման ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 104.090.500 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԻՆՆՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը ներկայացել է 3-րդ հարցի քննարկման ժամանակ:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 3-րդ, 4-րդ եռամսյակների նախատեսված 104 090 500 (մեկ հարյուր չորս միլիոն ինսուն հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել ֆոնդային մաս:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ավետիս Առաքելյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝

1) եկամուտներ՝ 3 584 873.4 (երեք միլիարդ հինգ հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ծախսեր՝ 3 584 873.4 (երեք միլիարդ հինգ հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սահմանել որ՝

Համայնքի ղեկավարը համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10%-ի սահմաններում, սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.

1) համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների կազմակերպում), նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 12 (ՏԱՍՆԵՐԿՈՒ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական № 25122017-08-0039) Մովսես Խորենացի փողոց թիվ 46/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի թվով 12 (տասներկու) սոցիալական բնակարանները անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Գյումրու համայնքապետարանում հաշվառված, սոցիալական բնակարանների ծրագրում ընդգրկված և որպես շահառուներ ճանաչված անձանց՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 9 (ԻՆԸ) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N02102018-08-0025, N31082018-08-0025, N04092018-08-0016, N24092018-08-0017, N09102018-08-0014, N31082018-08-0016, N02102018-08-0021, N24092018-08-0029, N09102018-08-0002) թվով 9 (ինը) սոցիալական բնակարանները անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Գյումրու համայնքապետարանում հաշվառված, սոցիալական բնակարանների ծրագրում ընդգրկված և որպես շահառուներ ճանաչված անձանց՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ N 18 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մուշ-2 թաղամասի 3-րդ փողոց N 18 հասցեի 15,0 (տասնհինգ) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել 50 (հիսուն) տարի ժամկետով, բարեկարգման նպատակով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա.Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«20» դեկտեմբերի 2018թ.